Արձանագրություն N 4
ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/5 գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
«Էլեկտրական ապրանքների և պարագաներ»

29 ապրիլ 2025թ
ք. Երևան ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կարապետ Թոռչյան (համաձայն ռեկտորի 21.04.2025թվականի N01-04/17 հրամանի)
անդամներ՝ Սմբատ Այդինյան
Անահիտ Կարապետյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ռոզա Մեհրաբյան

Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Կ.Թոռչյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 Մասնակիցները սահմանված ժամկետում ներկայացրել են համապատասխան նմուշները

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ Սոպրանո Գրուպի, որի հայտում բացակայում է հավելված 1.3 իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ձևը:

1.3 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման պահանջներին, բացառությամբ՝

«Սոպրանո Գրուպի» ՍՊԸ -ի, որի հայտում

- 37-րդ, 38-րդ, 39-րդ, 40-րդ և 41-րդ չափաբաժինների համար «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում» և «Արտադրող» դաշտերը չեն պարունակում պահանջվող տեղատվությունը:
- Հավելված 1-ը՝ դիմում հայտարարությունը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ:

«Մաքս Շին» ՍՊԸ -ի, որի հայտում

- Հավելված 1-ում՝ դիմում հայտարարությունում, սխալ է լրացված պատվիրատուի անվանումը, ընթացակարգի ծածկագիրը և մրցույթին մասնակցության չափաբաժինները:
- Հավելված 1.3-ում՝ իրական շահառուի վերաբերյալ հայտարարագրի ձևում, ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված:
- 28-րդ և 29-րդ չափաբաժինների համար «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող» և «տեխնիկական բնութագիր» դաշտերը չեն պարունակում պահանջվող տեղատվությունը:

«ԷԼ-ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ -ի, որի հայտում

- 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34,-րդ չափաբաժինների համար ներկայացված «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող» դաշտերը չեն համապատասպանում հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին:
- 6-րդ չափաբաժնի համար ներկայացված «Մոդել», «Ապրանքային նշան», «Ֆիրմային անվանում», «Արտադրող» դաշտերը չեն համապատասպանում տեխնիկական բնութագրով ներկայացված ապրանքին, ինչպես նաև տեխնիկական բնութագրում բացակայում է ապրանքի համար պահանջվող չափերը:

- 21-րդ չափաբաժնի համար ներկայացված «Մոդել»-ը չի համապատասխանում «Ապրանքային նշան», «ֆիրմային անվանում» և «Արտադրող» դաշտերին:
- 51-րդ չափաբաժնի «տեխնիկական բնութագիր» սյունակում առկա է ապրաքի բնութագրին չվերաբերվող տեղեկատվություն:

«Վարդման» ՍՊԸ -ի, որի հայտում

- 1-ին չափաբաժնի համար «Մոդել» դաշտը սխալ է լրացված:
- 16-րդ, 17-րդ, 18-րդ չափաբաժինների համար «տեխնիկական բնութագիր» սյունակում առկա է ապրաքի բնութագրին չվերաբերվող տեղեկատվություն:

«Ասմիդա» ՍՊԸ -ի, որի հայտում

- 14-րդ չափաբաժնի համար «Մոդել» դաշտը սխալ է լրացված, ինչպես նաև «տեխնիկական բնութագիր» սյունակում առկա է ապրաքի բնութագրին չվերաբերվող տեղեկատվություն:

«Կա-Տա» ՍՊԸ -ի, որի հայտում

- 13-րդ և 15-րդ չափաբաժինների համար «Մոդել» դաշտը թերի է լրացված, «Արտադրող» դաշտը սխալ է լրացված, ինչպես նաև «տեխնիկական բնութագիր» դաշտում առկա է ապրաքի բնութագրին չվերաբերվող տեղեկատվություն:
- 45-րդ, 46-րդ, 48-րդ և 49-րդ չափաբաժինների համար «Արտադրող» դաշտերը սխալ են լրացված

Արտակ Աբգրայան ԱՁ-ի, որի հայտում

- 43-րդ և 44-րդ չափաբաժինների համար առաջարկված VAG ապրանքանիշի ստանդարտները չեն համապատասխանում հրավերով սահմանված ստանդարտներին:

1.4 35-րդ, 36-րդ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական հատկացումները:

Հաշվի առնելով վերոնշվածը գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 35-րդ, 36-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն (ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ մասնակցի առաջարկած գինը գերազանցում է նախատեսված ֆինանսական հատկացումները):
- Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ԷԱԱՊՁԲ-25/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգում շտկել արձանագրված անհամապատասխանությունները.
- Նիստը վերսկսել շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին (ք. Երևան, Տերյան 105, 3211 սենյակ հասցեում):

Հանձնաժողովի

նախագահ Կարապետ Թոռչյան

Անդամներ Սմբատ Այդինյան

Անահիտ Կարապետյան

Քարտուղար Ռոզա Մեհրաբյան